

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ “ՆՈՐ ՕՐ”, Ի

ՆԱՍՏԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԹՂԹԱԳՅՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԵԼ ՈՍ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի  
ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ. 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

Ձեռագիրներն եւ չին դարձուիք ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արտատու, ժ. ՄԻՒՆԻՍԷՆ

Սեղանակառուի լսարան-ընթերցաստան

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գահիրէի համար	Տարեկան,	50
»	Վեցամսեայ	30
Շրջակայից »	Տարեկան,	60
»	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍՏՄԱՆ ԶԱՄԱՐ

Տարեկան . . . .	Ֆրանկ	18
Վեցամսեայ . . .	»	10

ՌՈՒՍՒՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ԶԱՄԱՐ

Տարեկան . . . .	Րուբլի	7
Վեցամսեայ . . .	»	4

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԵԿ Է

ԵՒ ԹՂԹԱՏՄԱՆ ՍԱՄՊԸ

Թիւրքի Վարչութեանը վրայ է:

## ՀԱՅՈՒՆ ԿԵՂՏԸ

Նոր չէ՛ ան, Հայութեան ճակտին խարանը, երեսին կեղտը. մեր ցեղին պատմութիւնն անո՛վ պղծուած է. թագն ու գահը, թուրն ու մակա՛նը՝ ժանգոտուած են անո՛վ. ժամանակը, որ ընդու՛նակ է ջնջելու ամեն ազտ, չենք գիտեր ի՛նչ թագուն կապերով կաշկանդած է Հայուն ճա՛կատագիրն այս անջնջելի դատապարտութեան հետ: Մախանքի, կասկածանքի ու կեղծիքի կեղտն է ան, որ բորոտած է ազգութիւնը:

Ամենամեծ գժբազուցութիւնը, որուն մատնուած ըլլայ Հայութիւնն իր ծագման առաջին օրէն, իր երկրին դիրքն է, շրջապատուած տարասեռ տարրերէ, անյագ ու բարբարիկ դրացիներէ, որոնց մայր երազն եղած է արբանալ այդ յուռթի ու գեղազուարճ գրախտաւայրին: Ամպերէն պարուրուած լեռները, երկրագնդին համասի թաւուտները, եղեմը յիշեցնող պարտէզները, նոյր քնացնող այգիները, քառառալ գետերն ու հեղակարկալ վտակները, հովասուն հովիտներն ու ծիրանի ծովակները, այս սքանչելի ամբողջութիւնը՝ գրգռեց վաւաշտո նամիրամի քիմքն ու քանի՛ քանի՛ երկրակալներու պատուքը: Այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն հրապուրիչ երկրի մը զաւակները, սրտերն արիւնուտող իրականութիւն, իրերասպան քաղաքակա՛նութեան մը զոհ եղան, ու այսօր, օտար, հիւրամերժ ավերու վրայ, խոժոռ աստղերու տակ, անարգուած ու լքուած, կը քաշկուտեն իրենց ճգնաժամի ճնշող րոպէները, դժկամակ նայուածք մը կը նետեն ետեւին և կը նշմարեն Մայր-Հայրենիքը՝ մուխի մէջ. դրախտաւայրը՝ աւերակ, լեռները՝ լերկ ու մերկ, թաւուտները՝ աւազակներու կաղազ, պարտէզներն ու այգիները՝ մոխրակոյտ, վտակներն ու գետերը՝ արիւնաներկ. ծովակները՝ գեղեցման ու աշխարհը՝ կուլայ:

Ի՞նչ անցաւ արդեօք անոր վրայէն. բնակիչները, շմբո՛ւժ գիւհահարներ, գլուխնին կը զարնեն քարէ քար, կը թափառին ու կը մուրան. սովեալներու, հրկիզեալներու, որբերու, այրիներու մարտիրոսութիւն. հարկերէ ճընշուածներու, բանտ նետուած անմեղներու, ջարդերէ ապրած խեղագարներու, դահիճներէ անտեսուած ապուշ բազաւորներու, Իսլամին շնորհիւ իրենց էութիւնն ընդ քարոյց ողորմելիներու, կամաւոր ու ակամայ պանդուխտներու, բազաւ խնդիրներու, խաշագողներու, լրտեսներու ամբողջ մը, բանակ մը. ահա՛ ներկայ Հայութիւնը. Բայց ինչո՞ւ այս տարօրինակ հակապատկերը. . . .

Ինչո՞ւ . . . .

Պատասխանը՝ մեր դատակնիքն է. ըրինք եղանք, մինչև որ այս վախճանը գտանք. մենք մե՛ր ձեռքով բացինք, մե՛նք հրեցինք զիրար ու գլորեցինք անդունդը, որուն մէջ, ո՛վ գիտէ մինչև ե՛րբ պիտի թապալտկինք, մեր անհատական ու հանրային կեանքին մէջ բռնած ընթացքին հետեւանք կրելու համար. . . . Բնութիւնը չսխալիր. արդա՛ր է իր վճիռներուն մէջ. բնական օրէնքի տրամադրութիւնն է որ ի գործ կը դրուի մեր վրայ:

Ի՞նչ ի՞նչպէս . . .

Նանապէսակալն էինք, անխտիր ասպնջական ու պաշտպան եղանք հայրասպաններու, զորի բարձրացուցինք մինչև գագաթը նախարարութեան. տուինք անոնց, այդ ոճրագործ փախրատականներուն, հող, բնակութիւն, սիտոյտ, բարձ, իշխանութիւն, ամեն բան ու հիւրասէր ըսին մեզ: Արխայակալն էինք, անթիւ անհամար աւատակներու, գղեկապետներու, թագազիր ասպետներու, քրմապետներու կամ հայրապետներու, ինքնակոչ արքայիկներու ձեռք խաղալիք զարձուցինք Այրարատայ բազմը, թագաւորութիւնը: Ունէինք ինչ որ կը վայելէր ունենալ մեծ ազգի մը. բայց, չունէինք մեր ունեցածը պահելու, զայն անեղծ ու անձեռնմխելի ընելու համար պահանջուած օժտումները. երբ իշխող էինք, կարծեցինք թէ՛ յաւիտենականութեան հետ դաշինք կնքած էինք միշտ իշխող մնալու, առանց քիչ մը խորհելու թէ՛ ժամանակը յարափոփոխ է ու համայնաւեր: Ուստի, մեծ ու պզտիկ, զարմիկ ու աւարկ, մեր կամքին ու կրքին բարձր թափովը ջանացինք փութացնելու զահապիժումը, մեծ ու վերջնական անկումը: Ու հիմայ, գերի՛ ենք, գերի՛ մեր բազդին ու մեր յիմար բնագոյններուն:

Կեղտը զոր հագած էինք, թանձրացաւ դարերու խաւերով, միս կապեց մեր մեին վրայ, մասը կազմեց մեր մերթիւն, կաշին եղաւ մեր երեսին, ինչպէս կը գոչէր զայրագին յաւէտ ողբացեալ բանաստեղծը .

«Ա՛յ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ  
Ամօթի սուրբ ջուր որ բերան բանանք».

Իրա՛ւ, չմնաց գէթ մի շիթ, երեսի ջրէն, զոր ունէին մեր շիկնոտ մայրերն ու պանծալի հայրերը. գերութիւնը, տգիտութիւնը, պանդրխտութիւնը, հալածող զեկերու պէս խոշտանգեցին ու մէկէ աւելի արտերու տէր ըրին Հայութիւնը:

Եթէ թուենք հայութեան կեղտ ու արատ բերողները, պիտի տեսնենք որ ամեն դասակարգի մէջ ալ կան:

Նախագահն է կղերակալը — քահանայ, քարոզիչ ու պատուելի — որ բնմին վրայէն կը ձաղկէ մոլութիւնները, թէև ինք թաղուած ըլլայ ցարամոցն՝ իր ակնարկած մեղքերուն մէջ, որ դազազին առջև, միմոսի ժպիտներով պերճախօսութիւն կը ծամծմէ. քարոզիչը, որ գերեզմանին եղերքը, գերասանի շարժուակներով կը շարժէ ծաղրը ժողովրդին, զոր միամիտ կը կարծէ իր գերազանցօրէն բարեմտութեամբ: Քահանան, տգիտութեան մարմնացում, ձեռնարկուած է մկրտութիւն, սպակ, ու թագում կատարելու իտեղալ միայն:

Կեղտն է հայուն՝ ուսուցիչը, որ ուրիշ գործի մը պակասէն ստիպուած է ընդգրկել այդ նուիրական ու վսեմ պաշտօնը, ու վառձկանի հանգամանքով կը յաճախէ վարժարան, ակնապիշ սպասելով ամսագլխուն:

Կեղտն է հայուն՝ խմբագիրը, որ իր պարբերաբար հրատարակ նետած ազատ թերթի մէջ, հայհուշներու, պոռչուտ քննադատ և վայրահաչիւնի խտալուր ժխոր մը կը հնչեցնէ. կ'անպատուէ մայրենի լեզուն իր անհագեղ քառասփայլներով և հայհոյող հետտու մեղքովը. ոք չահադիտական տաղաբանութեամբ (chantage) կը ձգտի շահագործելու միամտութիւնը հանրութեան, որուն ողորմելի՛ հակասութիւն, ինքզինք կը հուշակէ ուղեցոյցն ու ճշմարիտ դաստիարակը, վարդապետը:

Կեղտն է հայուն՝ պաշտօնեան, ըլլայ ազգային թէ պետական, որ տիրողոսի մը, թոշակի մը յաւելման սիրոյն կը կոխտուէ ազգին իրաւունքն ու կ'ապրի լքելով ոտքերն անոր՝ որուն կը պարտի իր մուտքն ու պաշտօնին ապահովութիւնը, հոգ չէ թէ ան, իր պաշտպանը, տէրը, արհամարհէ քճնուներն ու շողմութիւնները:

Կեղտն է հայուն՝ վաճառակալը. — մեծ թէ պզտիկ, մեծաքանակ թէ փոքրաքանակ — որ ասոր անոր իրաւունքը կապուելէ վերջ՝ ինքզինք սնանկ կը հուշակէ, միանգամ ընդմիշտ հաստատելով իր վրայ բարոյական սնանկացումը:

Կեղտն է հայուն՝ խորհրդակալը որ իր անհատական շահերուն կը փորձէ ծառայեցնել հանրային շահերը անոնց, որոնց պահպանութեան պաշտօնն յանձնուած է իրեն:

Սակայն քահանայէն, պատուելիէն, ուսուցիչէն, խմբագիրէն, պաշտօնեայէն, վտանգակալէն ու ժողովականէն անգլի կ'ա՛յ ուրիշ ճակն մը, որ կոյուղներու ժանտութիւնը կը բուրբ: Միավաճառներու և լրամայրութաներու դատակին մէջ կը տեսնուի ստէպ այդ տխուր երկայթը, զոր հասկցնել կուզենք ականով, ասոնք, փողոցի ու հրատարակի մարդիկը, թագուն կուսակցութիւններ կազմած են իրենք իրենց մէջ:



### Հ Ե Ռ Ա Ք Ի Ր Ն Ե Ր

ՓԱՐԻԶ 9 Յուլիոս. — Իշխան Գրիգորի մէջ կը պաշտպանէ եւրոպացոց բնակութիւնները:

Քիշի 9 Յուլիոս. — Գերմանական նաւատորմը մեկնեցաւ Չինաստան:

Ս. ԲէթրՍՊՈՒՐԿ 9 Յուլիոս. — Ռուսիա բնաւ չ'սահմանափակեր թիւը գնդերուն, զորս ձաբոն պիտի կրնայ զրկել Չինաստան, բաւական է որ ասով ձաբոն մենաշնորհեալ գերք մը չ'ստանայ:

### ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱՌԱՂԱՆ. — Երեկ առաւօտ ժամը ճիշտ 6 ինչ անկախ խափշիկ կնոջ մարդասպանը Ալի Ահմէտ կախազան բարձրացաւ, Պապ-էլ-Պալաքի հրապարակը, կառավարական Պալատին ցուցեւ, իսկուս բազմութեան մը ներկայութեան առանց սեւէ միջազգային:

ԻՆՔԵՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ. — Թէվֆիգիլէի զարդէն զեռասի ուսանող մը, Ա. Մ. ծծմբային թթուութեամբ խմելով վերջ տուաւ իր կեանքին նկատելով որ ալ չ'պիտի կրնար, ըստ նոր կանոնադրութեանց, շարունակել իր ուսման ընթացքը, եւ այսպէս, իր շապագան վտանգուած տեսնելով, դիմած է այդ յուսահատական միջոցին:

Ս. ՁԵՌԱՔԻՐԻՐ. — Հռովմի Իգալի թերթին մէջ կը կարգանք.

«Իմաստասիր մզկիթին մէջ գտնուեցաւ շարք մը վեց գեղեցիկ ձեռագիրներու, փոքրածալ Գուրանով ըսկած՝ եւ ուրիշ Գուրանով մը վերջացած, ճիշդ Գահի-րէի Մատենադարանին ծալքին համանուն ծալքով: Գերմանիոյ մէջ կը յուսացուի գտնել նաեւ Նոր Կապարանի ընդգրկը: Կիցա կայսրը Իմաստասիր գրեց այս մասին յանձնարարելով որ ամենամեծ ջանքեր ընեն զայս ձեռք ձգելու համար:

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«Լ'Արմէնի»ի մէջ կը կարգանք.

ԱՅՎԱՋՈՎՍԿԻ. — «Շաւիղ»ի մէջ Պ. Է. Սրմաքէշիանկեան կը պատմէ թէ՛ ողբացեալ նկարիչը ծովը նետած էր բոլոր իր թրքական շքանշանները, Հայկական շարժերուն ժամանակ, եւ գացած ըսած էր թուրք հիւպատոսին. — «Մովը նետեցի շքանշանները զոր ինձ ընծայած էր քու արիւնարու տէրը: Ահա՛ ժապաւէնները, զրկէ զանոնք իրեն: Ինչ ալ կրնայ ծովը նետել իմ նկարներս. բայց ես կը խնդամ իրեն վրայ, որովհետեւ անոնց զինը վճարած է արդէն»:

ԲԱՐՆՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԸ. — Սուլթանը հրամայեց լուծել բարեկրօնականներու Յանձնարարութիւնը, հաստատուած 1895ին: Յաճախ կրկնած ենք թէ՛ Բ. Դուռը

կեղտոտ, միշտ հայտնի մէջէն փոքր ճիւղներ եւ զած էին:

Մարիամ թէեւ իր բնական մարմանը չ'էր չ'էր կորսնցուցած, բայց կրած նախատինքներէն, ենթարկուած լիկանքներէն վնասած ըլլալով, հոգատարութիւնը նուազած էր:

Բայց այս կսկածալի վիճակին մէջ Գառնիկ սկսաւ օրերով չ'երեւալ: Հացագործը կը շարունակէր ամեն առտու դուռը զարնելով հաց տալու, բայց մասվաճառը խիստ քիչ անգամ կը տեսնուէր:

Առաւօտ մը մարդ մը Գառնիկը շարժած տուն եկաւ փողոցի դռնէն պոռալով որ պատրաստեն անկողինը, որուն վրայ բեր ձգեց ու գնաց:

Չկնորսը առջի գիշեր գինովութեան մէջ կռուած էր ուրիշի մը հետ: Նորա արտոյեանը յար մը զարնելով կորած էր Գառնիկին ձախ սրունքը: Հանդիսատես արհեստակիրները զորքը ուստիկանութեան չ'իմացընելով պացած էին, վառնդի յանցաւորն ու նախապարձակը Գառնիկին հղած էր, որուն պատժուելը հարկ պիտի ըլլար՝ եթէ խնդիրը զիպուածով արդարութեամբ քննուէր:

Մարիամ գունատ, ապիկար, զգացած գաւին առջեւ անգոր, եւ աղու մը պէս լալկան տեսնելով Գառնիկը՝ խանդաղաղանցեալ եւ ամուսնական պարտականութեամբ այս անգամ գինուելով՝ սկսաւ խղճի մտք խնամել հիւանդը, առանց անոր կրած ցաւէն եւ սրտին վատթարացումէն յառաջ եկած յանիրաւի կշտամբանաց կարեւորութիւն տալու:

Յանձնարարութիւն մը կ'ստեղծէ ամեն անգամ որ խնդիր մը թաղել ուզէ:

ՇՍՀՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ. — Տօղթ. Յար. Սան Թիրեաքեան Շահէն ստացաւ Ատիւնի եւ Արեգակին մեծ նշանն ու ազամանդէ գեղեցիկ մասնի մը, Շահին տղջիլը ծանր հիւանդութենէ մը բժշկած ըլլալուն համար: Նորին Վեհափառութիւնը շնորհած է նաեւ Սանթիանոս Թորոսի Սրբաբնիկ Սարաճի, Գալթի մի կրկնակեան վաճառատան ներկայացուցչին, որ ժամանակին Կ. Պոլսոյ թերթերու մէջ ծանօթ է իր յօդուածներով: ՍՊԱՀԱՆ. — Ճուլֆայի Հայ հասարակութիւնը զիւր մ'ուսի մեկուն տնուն, որուն եկամուտներով կը պահէ իր զարդները: Պարսիկ բռնաւորիկ մը տարիէ մ'ի վեր գրաւած էր այդ գիւղը, զոր կողքէր իւրացնել: Պարտաւորութեան զիմել ուղղակի Շահին, որ իր սովոր բարեացակամութեամբն ու արդարապիտութեամբ հրամայեց անմիջապէս Ճուլֆայի Հայերուն եւ տալ գիւղը: Ինչպէս չ'օրհնել օրերն ա՛յսքան վեհանման վեհապետի մը:

ԲէթրՍՊՈՒՐԿ. — «Կոմս Մուրափիէֆ, Արտաքին Գործերու նախարարը մեծաւ Չինական տագնապի յուճուէն, ինչպէս որ իր նախորդն ալ, իշխան Լոպանոֆ, մեռած է Հայկական տագնապի յուճումէն: Մուրափիէֆի յաջորդութեան ընտրելաց մէջ կը յիշուի անունը Պ. Չինովիէֆի Կ. Պոլսոյ ղեկավարն, որ սրտանց կ'ատէ Սուլթանն ու իր վարչութիւնը:

Թ. ՖԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ. — Աղէքսանդրիոյ Հայ հասարակութեան կողմէն քանիցս արտայայտուած փափազը զոհանդիւր նպատակով՝ Հայ թատրոնի նախապետը Տիար Թ. Ֆասուլեան, ընտրեալ խմբի մը մասնակցութեամբ, ամսոյս 14ին յառաջիկայ շաբաթ գիշեր, Ապպա Նիւիի թատրոնին մէջ պիտի ներկայացնէ, արտակարգ շքեղութեամբ, ողբացեալ Մ. Պէշկիթաշլեանի ԱՐՇԱԿ Բ. ողբերգութիւնը, յետ որոյ ՓԱՅՏԻ ԹՈՒՐԸ կատակերգութիւնը, երկուքին կարեւորագոյն գերերն ինք ստանձնելով:

Առաջին անգամն է որ Եգիպտոսի մէջ համակրելի արուեստագէտին կողմէն պիտի կատարուի Աբուլ Բ. Ի զերը:

Վաղեմի վաստակաւորին, գէթ այս անգամ, նիւթական յաջողութիւն գտնելուն համար — որ անշուշտ կախում ունի մեր բարեսէր գրացիներուն մասնաւոր խնամքէն ու բարեացակամութենէն — Գերմանիոյ մաղթանքնիս ուղղելէ յետոյ, այժմէն կարելի է երաշխաւորել ներկայացման յաջողութիւնն որ հանրութեան բազմաթիւ պիտի համապատասխանէ, նկատելով խմբին ընտիր բաղադրութիւնն ու խմբապետին տարիներու փորձառութիւնը:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՒՄ

Հասրան-Ղնկերցատուն ընկերութեան եւ ռանգուն անդամներէն Տիար Սահակ Բիւրքճի-Եսայեան, քանի մ'ազգայիններու մասնակցութեամբ, մէկ տարեկան «Նոր Օր» նուիրեց տեղ-

Բայց մինչեւ որ այդ խեղճ սրունքը՝ որ սղէտ եւ աղքատ ընտանեաց անգամ մը պատկանելու անբաղտութիւնն ունէր՝ ծանօթ եւ անձանօթ պատուներուն ու իսկ մը կարծեցեալ բժիշկներուն կոչաւ ու անվարժ ձեռքերէն եւ աւանդական զեղերէն ազատելով ուսեալ մասնագէտի մը ձեռք ինկաւ, թուեաւորուած, ուռած, փտելու մտեցած եւ հետեւաբար զժողովարարի իշխանութեամբ օճուցութեամբ՝ տան մէջ շրջագայի:

Այս երկարատեւ հիւանդութեան միջոցին երկու մակոյկները եւ տան կահ կարասիքը ծախելէն զատ խոշորկեկ պարտք մ'ալ գոյացած էր իսկ բարեբաստութեան եւ համաձայնութեան ժամանակ խնայուած գրամը շատոնց փոխադրուած էր գինեկանին գրպանը:

Մարիամ՝ առժամայէս ամեն անցեալը մոռցած՝ վերահաս թշուառութեան դէմ քաջաբար մարտնչելու սկսաւ՝ ստոր անոր կար կարելով:

Բայց կնոջ մը անպատուութենէ հետ կերպով իր ճակատին քրտինքով վասակելի ու դած զոյղն ինչ գրամը ինչպէս կրնար բաւել սնուցանելու եւ հագուելու: Ի բաց առեալ զինքը՝ երկու մասնակիներ որոնք բաւականանալ չ'են գիտեր, եւ այդ մը՝ որ կնոջը վատնած աչքի լոյսին գծուած վարձատրութեան մեծագոյն մասը գինեկանները հարստացնելու կը յատկացնէ:

Արդարեւ Գառնիկ՝ հազիւ զուրս ելլելու կարողացած՝ չ'վերստացած էր իր կործանարար սովորութիւնը: Այնքան զժողովրդին է աշխատութեան հետ վերստին բարեկամանալ, երբ միանգամ ծուլութեան կպչուն լուծին տակ ինկած է մարդ:

Եւսոյ Բրուսական հիւանդանոցը գարմանուող Հայերու:

Թերթի վարչութիւնը գոհունակութեամբ կը նշանակէ յիշեալ ընթերցատէր ազգայնոց տոհմասիրական գովելի արարքը, յօրինակ ուրիշ ազգայիններու, եւ հրապարակաւ կը յայտնէ իր շնորհակալութիւնը:

### ՆՈՒՐԱՏՈՒՔ ԼՍԱՐԱՆ ԸՆԹԵՐՅԱՆ

Գաւիթ. — Տիար Սահակ Բիւրքճի-Եսայեան 10 զրջ. այլ նգրպտ. «Կեղացուեստին Իերը» գրքոյին համար:

### ԱՏԱՄԱՐՈՅԹ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Իմոզները ձրի կը գարմանէ ամեն օր, առաւօտ ժամը 7էն մինչև 8, Գաֆէ տը լա Պուրսի կից, թիւ 9 արարթըմանին մէջ Բ. յարկ:

### ԿՈՒԶԷՔ ՈՒՆԵՆԱԼ

ՈՍՊԻԹ

ԿՈՒՆԷ ԼՍՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

### ԺՍՄԱՑՈՅՑ ՍԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ԴՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

### ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԵՂԵՔԻ ՄՈՒՍԻՔԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍՊԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենադիւրամաշտելի գիներն սկսելով մինչեւ ազամանդագարդ: Արժաթ ժամացոյցներ 50 դրոշէն սկսեալ: Նիքէլ սրման/ուստ ժամացոյցներ 22 դրոշէն սկսեալ. նաեւ Ոսկի, արժաթ եւ սպիտակաւ շրջութաներ եւ զոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ ջոնսօլի բազմազան բանախմբեր:

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Դրուշի անհատապի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն:

Ուրիշ գիմեցէ՛ք ուղղակի:

### ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Այս անուստ՝ որուն իրիկունը կ'սկսի մեր պատմութիւնը՝ Գառնիկ սնկողնէն ելաւ խիստ խոժոռագէմ, վասնզի առաջի իրիկուն սովորականէն աւելի խմած էր, եւ ապտակեց պղտիկները, որոնք քսանտ չորս ժամէ ՚ի վեր սկսեալներուն տակ ոչինչ գրած ըլլալով սրտակտուր կեանքով լալու մեծ յանցանքը կը գործէին: Սեղճերը միայն ութութենէ կուլային եւ կարծես չ'էին զգար ցուրտը որ գիւրեւը կը զողացնէր: Սակայն որ ասոր քիչ չաա գիմանալու հնարը գտած էին, որ էր ապաստանի մայրական գիրկը, եւ իրենց կապուտացած ու ձաթոտած մանտրտուկ ձեռքերը անոր անութներու տակ խօթելով:

(Շարունակելի)

Է.

Այն անուստ՝ որուն իրիկունը կ'սկսի մեր պատմութիւնը՝ Գառնիկ սնկողնէն ելաւ խիստ խոժոռագէմ, վասնզի առաջի իրիկուն սովորականէն աւելի խմած էր, եւ ապտակեց պղտիկները, որոնք քսանտ չորս ժամէ ՚ի վեր սկսեալներուն տակ ոչինչ գրած ըլլալով սրտակտուր կեանքով լալու մեծ յանցանքը կը գործէին: Սեղճերը միայն ութութենէ կուլային եւ կարծես չ'էին զգար ցուրտը որ գիւրեւը կը զողացնէր: Սակայն որ ասոր քիչ չաա գիմանալու հնարը գտած էին, որ էր ապաստանի մայրական գիրկը, եւ իրենց կապուտացած ու ձաթոտած մանտրտուկ ձեռքերը անոր անութներու տակ խօթելով:

(Շարունակելի)

ՄԵԿՈՒՆ ՏԵՂ ՄԻԻՍԸ

Եղբիկի մը պէս, զոր կատաղութեամբ հաջող որ- սականք կը պաշարեն նեղը կը ձգեն ամեն կողմէ, որուն փափուկ կուրծքին տակ, խրոչած թռչուն, սիրտը կը թրթռայ սարսափէն, Արշակ այն օրը միմիկանոցի մը ձեղունին մէջ ապաւինեցաւ — մահ — ունեցող, դու- ները խորտակելով խանութներէն եւ տուներէն ներս խուժող, կայիններով, սուրբով ու բիրտով քառամա- ծածան մոլեգին քանասար խուժանի մը ձեռքէն ազա- տելու համար:

Մազապուր գիւրծաւ սոսկալի վախճանէ մը, իբրև հրաշքով, եւ կրեք օր կրեք գիշեր անթի ծարաւ հոն անցուց, հոն, այն նեղ մութ տեղը կծկտած, ամեն վայրկեան կարծելով թէ պիտի գան անոնք, անոնք որոնց ահուրի աղաղակները կը լսէր մահուան մարգա- րէական ականջովը, ու զինքը կտտամած պիտի բնկնու-

Աւայդ եօթնասուներ չափ ժամերու միջոցին, որ յաւիտենութեան չափ երկար թուեցան իրեն, մահա- սարսուռ տալիս պիտի մէջտեղը, մտածեց իր մայրը, իր մատաղատի ամուսինը, երեսակայեց անոնց մտատան- ջութիւններն ու երկիւղները, խորհեցաւ թէ ինչպէս խեղճ կիները կը տառապէին իրեն համար, թէ ինչպէս պիտի անցունէին այդ ժամանակը, անտեղեակ իր վի- ճակին, կարծելով թիւրեւս որ ինքն ալ մէկը եղած էր այն անթիւ զոհերէն, որ կ'իյնային հրապարակները, փողոցներու մէջ, սուներու սեւերուն առջեւ, պարտէզ- ներու մէջ, պատերու վրայ, տանիքներու վրայ, հորե- րուն մէջ, հովուն մէջ, ամեն տեղ, մահասարսուռ աղի- ճակի ճիչեր պոթկալէ ու, անգէն, աղիկաւոր աղիւս- ներ ճուղիկ վերջը, եւ որոնց ինչ ըլլալուն շատ անգամ տեղեկութիւն ունեցող չկար, որ ինկան զանակին տակ, մահակին տակ, կայցինին տակ, այնպիսի պարագաներու մէջ եւ եղբրական այնպիսի մահաբաժանութիւններով, որոնց զոյգը միայն բաւական պիտի ըլլար մարդու երակներուն մէջ արիւնը սպազեցնել:

Երեք օրէն վերջը, երբ Արշակ գործաւ տուն, մա- հանքը վիճակի մէջ գտաւ իր կիներ, վախէն ու հոգէն յանկարծառաւ անրուժելի հիւանդութենէ մը զայնուած էր:

Եւ քանի մը օր վերջը, արդարեւ, իր մօրը հետ միմիկ կը մնար Արշակ սցաւոր տանը մէջ, որ զիս մէկ երկու շաբաթ առաջ բոյն մըն էր հոգեզմայլ ուրախու- թեան, գրաւթութեան, սիրոյ եւ երջանկութեան:

Երբ, ինչ ժամանակ վերջը, մօրմէն օգնուած, ողոր- մելի երիտասարդը հարկադրուեցաւ տանը իրեղենները կարգադրել բնակութեան փոփոխութեան մը պատճա- րաւ, պէտք եղաւ անհետացողին ալ դարանը խուղելու քաջութիւնը ունենալ:

Չկայ բան մը այնչափ սրտալոյզ կերպով հոգեբա- նական որչափ դեռահաս աղջկան մը կամ մանկամարդ կնոջ մը բացակայութեան՝ անոր պահարանին կամ դա- րանին կամ արկղին բացումը: Մօտ կը զգաս ինքզինքդ տուփ մը բանալու ուրիշ անխնայ զուրս պիտի ըլլի արտաբերէ կիսամոնի եւ անուշահոտութեանց հոտով մը ժապաւեններ, շղարչներ, ժանեակներ, քանի մը ա- պարանջան, փոքրիկ տուփեր, ալ աւելի փոքրիկ սըր- ուակներ, ամենքն ալ այդ սրտաշարժ բոյրովը տոգորուն, կը խօսին ընդ ձախարակեայ ճերմակ ծղիլներու վրայ, կարապի պարանոցի մը վրայ որուն յետակողմի սկզբ- նաւորութեան մէջ կ'ողորին քանի մը թխագեղ կամ խարտեայ մազեր, հիւանալի կերպով շնորհալի եւ սիրուն զլխու մը վրայ՝ որուն մէջ կը բացուին երկու լու- սապաղպալ նայուածքներ: Առուստի եւ օճառի թիթիւ հոտ մը պահուելու է տեղ մը, ձորձերուն մէջ, ու զքեզ թաղուած կը զգաս զաշտերուն մէջ մեծատարած ծառի մը ստուերներուն տակ, ծառի մը որուն ոստերուն վրայ իրենց յաւիտենական ճառողիւնը կը սուլին բնութեան գեղեցկութենէն հրապուրուած զիւթուած թռչուններ: Տուփերը կարծես տեսակ տեսակ անուշութիւններ կը փակեն: Պանդորայի տուփէն բոլորովին տարբեր, ու կ'ըսես թէ յաւակն է որ բանաս զանոնք ու պիտի տեսնես անոնցմէ զուրս սլանալը մանիշակէ, վարդէ, եղբուանիէ, կակաչէ ու շուշանէ յերկրուած թեւերով մեղրածուծներու: Փետրափնջիկներ դեռահիւս փոքրիկ բոյներ ըլլալ կը թուին Գոհար մը սիրտ մըն է, որ կը բարախէ: Սա թաշկինակը հրեշտակներէն զրկուած համակրական նամակ մըն է ծաղուած: Ժանեակ մը ձերմակ ժպիտ մըն է: Սա բանուանքը ուրախու- թիւն մըն է: Սա ժապաւենը անողորմելի անմեղութեան յիշատակներով լեցուն կայ մըն է: Մանրակար սա պատկերը արցունք մը կուրայ: Մալուած սա փողկապը մանր մուշք անմահի գաղտնիքներու պահարան մըն է: Ուայս ամենը կը յուզուի, կը խորհի, կ'ողբայ, կը ժպտի, կը սիրէ, աղօթքներու նմանող բառեր կը թոթովէ, կը խոտանայ, ուրտեր կը դնէ, կը մաղթէ, կը բաղձայ, կը սփոթէ, մտածել կուտայ, ինչ քանի, չիս կրնար բեր: Սրբավայրի մը առջեւ կը զգաս ինքզինքդ, ու

գորովայն կերպով պատկանելի բանի մը առջեւ կ'են- թաղրես զքեզ, ու կ'ըսես քեզի որ, եթէ բացակայ է- սկը հոն ըլլար, այդ պահուն, տարօրինակ բաներ պիտի պատմէր քեզի, այնպիսի բաներ որ ուրախութեան ար- ցունքներ թափել պիտի տային:

Բայց եթէ բացական մնակալ մըն է, այդ բացուած արկղը կամ դարակը մեր սիրտը կը ճնշէ, ու ողբագին բաներու վրայ կը խօսի մեզի: Գերեզմանի մը բացումին կը նմանի: Կը կարծես որ հոտը կ'անոնս այն զմուռմին որով հինները դիակները սովոր էին պարուրել:

Յայնժամ շրջագրես մը մտիւս մըն է: Գոհարներ՝ փակ աչքեր ըլլալ կը թուին: Տեսած ամեն առարկայէ կարծես թէ ողբալիկ ձայն մը պիտի յառնէ: Գրաստնոց մը թարգմանած ծաղիկներու փունջ մըն է: Մարգարիտ- ներ՝ արցունքներ են: մեծ անապատին եղբրքը կը զգաս ինքզինքդ: Կաշարաններ աճիւնով լեցուն սափարներ կը թուին ըլլալ: Թաշկինակ մը մտացութիւն մըն է: Բոյր մը տառապանք մըն է, վասն զի մեռելներուն վրայ աղօթքներ մըթմթացող քահանայի մը բուրուա- լին խուսկին կը նմանի: Աղաւանդ մը՝ յուսահատու- թեամբ բացված նայուածք մըն է: Բուստէ մանեակ մը՝ արիւնտ սրտերու գալարում մը կը յիշեցունէ: Չոյզ մը ձեռնոց՝ անասման տրամութիւն մըն է, սոգորուած երկնային բանի մը բոյրով, որ հիմա հոգ քարծած է: Կը կարծես տեսնել ձեռքեր որ քեզի կը պաղատին, կամ մատներ որ յաւիտենաւ գոցուած, եւ հերմետիկորէն գոցուած կախարիչ մը վեր անկելու համար ըլլած ճի- գերէն ծածուկեր են:

Եւ Արշակին սիրտին արիւն գնաց . . . ու յիշեց զացողին պատկերը իր բովանդակ կեանքին ու գործու- նէութեան մէջտեղ, դեռ բարախուն կենդանութեամբ: Բանի մը փշիւր զգաց լանջքին տակ, յիշեց անոր ժպիտը, ինքն իրեն ըսաւ թէ չէր գիտեր անոր այն աստիճան գինքը սիրելի՝ որ իրեն համար կրած տագնապը այսպիսի մահաոթիկ նեւեւանք մը ունենար, եւ, առանց կարե- նալու լալ, — քանի օրէ ի վեր լայով լայով թիւրեւս արցունքներու աղբիւրը զլխուն մէջ ցաղթած էր — արիւնտ աչքերը շորս գին պտտցուց, եւ, կրեք բառ պոտալով, կրեք բառ գոր չէր գիտեր թէ ինչպէս գիտէր, ո՛ւր սովորած էր, երեք սոսկալի բառ, հայնտութիւն մը, անէք մը արիւնկողի զագնի մը ուղղուած, սեն- ճակի մէջտեղ ինկաւ յորսայս, նուազած, զողահար մօրը բաղնիկներուն վրայ:

Յ. Ս.

ԲՈՒՆԻԹԻՒՆ ԵՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ

Ապականութեան, ըստոր կեղծիքի Մէջ թաղուած՝ դառն, նողկալի կեանքի՝ Մարդը բանաւոր — գաղան վայրենի — կը քալէ առաջ, անգունը դէպի խաւար, հաւար՝ յետադիմութեան: Չարագացած, բարձր դասը մարդկութեան՝ Ձիւնուած գիտութեան լուսով հրաշալի, իտէլական, ծընունդ հանճարի՝ Փոխան սրբեղու արցունքը խեղճին, Տառապաններուն, սրբով ճընշածին, Դիտէ բոլորը աչքով անտարբեր: Չգայուն սրտեր սպառած կըտրեր: Մանրակուռ շղթան ամբապինդ սեղմեց կեանքն ու խիղճ՝ տըխուր ընտանիքին մեծ Փոքրիկ անդամին: Արցունքի, արեան Մովրի են կազմուած. անոր մէջ լողան թագի ու փառքի, ոսկիի պետեր, շերտ, հողածին՝ երկրի աստուածներ, Բաւ է մէկ շունչը, նայուածքը խոժոռ չազարներ սրբով թաւալազրոր եւ կամ ժրպիտը շարաննեց պետին կանգնել, ողի տալ պնակալէզ վատին: Փըշտ երկրի վրայ՝ լուսազեղ անբիծ կամարին ներքեւ գեղատես երկնից՝ Անխիղճ բընութիւնը մեղմիկ կատարուին: Մթին նրկուզին, ժանտարայ բանտին Մէկ խորը նրստած՝ անմեղ պատանին, Մերուկն աեղարդ ի զուր կը տըքնի: Մահը ծըծելով: Օրէնք անարգար: Դահիճներ ազատ հեղենն անաղար, Ամթ մարդկութեան, լուս հանգիստես, Դարման չի խորհի ու կ'անէ անտես: Թրուառութիւնը, ճիւղ մարդակեր, Նորածիլ, մտողայ անբիծ հողներ Ճընշէ թեւերով ծանրը, կապարեայ: Օղին մէջ արագ, անկուշտ կը սուրայ

Le gérant, J. MUNIER.

Ճախրէ անմոռունը սրբուած մահ, աւեր: Ազատ համարձակ ովկէսննս պատեր Լեռ, բլուր, անդունդ, սըլանար յանկարծ Աշխարհի ծայրէն՝ կիսնք մը խորտակած՝ Մինչեւ տրեանկին լըրեալ հիւղին քով: Մանկիկը անուշ մի պաղատանքով Չոր հաց կը խնդրէր մայրիկէն անգին, Տրխո՛ւր պտտաբան, մայրը զանազին Տաք տաք արցունքով գրուիւր թըրջէր շերտաակին հէզ ու կը մըրմընջէր. «Ա՛լ չպիտի գայ հայրիկը սիրուն, վա՛խ, տըղա՛ս, ճըգեց. . . զընաց չա՛տ հեռուն»: Ճիւղը անգին, իբր ուրուանդկար Անկիւն մը կծկած՝ անէք կը տեղար: Մինչեւ չը՛նչէ փողըն անարկու Աշխարհը խաւար յեղաչըրջելու, Մինչեւ չը ծագի արեւը ժպտուն, Վե՛հ գրօշի վըրայ «Հաւասարութիւն» Ոսկի տառերով շարձանագրելի՝ Մարդկութիւնն անբաղք միշտ պիտի հիւժի Անխիղճ Բընութեան ճիւղին վայրագ՝ Եւ մարդակուլ, սեւ թըշուտութեան տակ: 25 Յունիս 1900 Վ. Ղ. Թուսուզ

ԿԵՐԻՈՒՄԱԿԱՆ-ՎՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԷԻ Հաստատել 1 յունիս 1897 Հիմնադիր-Տեղիք U. BETHUS

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապահի, և Յուլիս 15 սկսեալ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին յրացուցած և զէթ նախնական կրթութիւնն ստացած: Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն. նաև, առեւտրական աշխարհագրութիւն ու տոմարակալութիւն, գործնական մէթոտոյ: Ընդունելութեան պայմաններուն և ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար դիմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրա- սունը, Պաղար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասե- նեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բայ ի կիրա- կիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6:

ԱՒԱՆԴԱՏԱՐ (ԷՍԱՆԷՔՃԻ) ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇԱՐԷ ՄՕՂԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԳ, ԳԱՀԻՐԷ

Կ. Պալսոյ մուտակալախառի խառնութիւն Ըով Թիւ 81

Կը յայտարարէ արդոյ հասարակութեան թէ՛ Կ. Պալսոյ Պաղէ Դաբու, Խաչախի թիւ 26 վաճառատունը բնակող և երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց վստահութիւնը գրաւող էլեանէքճի Աբրահամ Է. Պալսոյ անունի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Ա. յուսեատե Կ. Պալսէն Երկրպետ և Երկրպետէն Կ. Պալիս զրկուելիք ամէն տեսակ աւանդներ անկողուստ ու ապահալ պիտի յանձնուին սահմանեալ տե- ղերնին:

ՀԷԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 8 ՅՈՒԼԻՍ 1900

200	2350	8945	6106	1604	714
1850	2074	2584	2694	2634	2514
3706	4945	4950	5234	5513	5806
5924	6370	6173	6674	6449	7097
		8869	9374	9918	

Տպագրութիւն Ս. ԴԱՐԻՆՅԱՆ — Պաղար Մուրուր